

ԾՐԱԳԻՐ

2007-2009թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև համագործակցության

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունը,

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին 2006թ. սեպտեմբերի 22-ի Համաձայնագրի իրագործման նպատակով պայմանավորվեցին 2007-2009թթ. ընթացքում իրականացնել հետևյալ համատեղ միջոցառումները,

2007 թվական

1. «Ազատագրված հետ չկապված պատիժների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության կազմակերպումը» թեմայով կլոր սեղան (Մոսկվա, հունիս):

2. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դատախազական մարմինների և հաստատությունների կառուցվածքին, նրանց խնդիրներին և գործառույթներին ծանոթացման նպատակով մասնագետների հանդիպում (Երևան, սեպտեմբեր):

2008 թվական

3. «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության, կոռուպցիոն և ահաբեկչական ուղղվածության հանցագործությունների դեմ պայքարի բնագավառում դատախազա-քննչական գործունեության արդիական հարցերը» թեմայով գիտագործնական խորհրդաժողով (Իրկուտսկ, փետրվար):

4. «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դատախազության մարմինների տեղը, դերը և իրավասությունները քրեական դատավարության բնագավառում» թեմայով սեմինար (Երևան, մայիս):

5. «Տնտեսության ոլորտում իրավախախտումների դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեության համակարգում» թեմայով կլոր սեղան (Երևան, սեպտեմբեր):

6. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դատախազության մասնագետների հանդիպում երկու պետությունների դատախազությունների համար կադրերի պատրաստման և դատախազության մարմինների աշխատակիցների որակավորման բարձրացման անհրաժեշտության քննարկման հարցերով փորձի փոխանակման նպատակով (Մոսկվա, նոյեմբեր):

2009 թվական

7. «Հանցավորության (այդ թվում դրա կազմակերպված ձևերի) դեմ պայքարի բնագավառում իրավապահ մարմինների համագործակցության համակարգում» թեմայով գիտաժողով (Մոսկվա, մարտ):

8. «Դատարանների կողմից քննվող քրեական գործերին մասնակցող դատախազների աշխատանքների կազմակերպում: Քրեական գործերով դատական որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման մեթոդիկան» թեմայով գիտագործնական խորհրդածողով (Երևան, հունիս):

9. «Հանձման մասին միջազգային պայմանագրերի կատարման կազմակերպման և ապահովման բնագավառի խնդրահարույց հարցերը» թեմայով սեմինար (Երևան, սեպտեմբեր):

10. «Ազգային քրեակատարողական օրենսդրությունը և Եվրոպական քրեակատարողական կանոնները (1987թ.): Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում քրեական պատիժների կատարման ժամանակ մարդու իրավունքների բնագավառում միջազգային և ազգային չափանիշների կիրառման պրակտիկան» թեմայով սեմինար (Մոսկվա, նոյեմբեր):

2007-2009 թվականներ

11. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դատախազությունների մարմինների և հաստատությունների գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ գերատեսչական և գիտական հրատարակությունների, ինչպես նաև մեթոդական նյութերի փոխանակում:

Սույն Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համակարգումը կկատարվի՝

- Հայաստանի Հանրապետության կողմից՝ միջազգային-իրավական կապերի բաժնի կողմից,
- Ռուսաստանի Դաշնության կողմից՝ միջազգային-իրավական համագործակցության գլխավոր վարչության կողմից:

Սույն Ծրագրով նախատեսված կոնկրետ միջոցառումների անցկացման կարգը և պայմանները կհամաձայնեցվեն լրացուցիչ:

Ծրագրի ավարտից հետո, Ծրագրի կատարման արդյունքների ամփոփման նպատակով, տեղի կունենա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության ներկայացուցիչների հանդիպում:

Ստորագրված է Մոսկվա քաղաքում, 2007թվականի մարտի 29-ին, երկու օրինակից, յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն լեզուներով:

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազության կողմից

Ռուսաստանի Դաշնության գլխավոր
դատախազության կողմից

գլխավոր դատախազ
Աղվան Հովսեփյան

գլխավոր դատախազ
Յուրի Չայկա